ՀՈՎՀԱՆՆԵՍ ԻՄԱՍՏԱՍԵՐԻ ՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ ՀԱՅԱՑՔՆԵՐԸ

Գ. Հ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Հովհաննես Իմաստասերը (Սարկավագը, ծնվել է մոտավորապես 1045—1055 թթ., վախճանվել՝ 1129 թ.) միջնադարյան հայ բազմահարուստ մատենագրության ականավոր այն ներկայացուցիչներից մեկն է, որն իր համակողմանի գիտելիքներով և մանկավարժական գործունեությամբ մեծ հռչակ է վայելել ոչ միայն իր ժամանակակիցների շրջանում, այլև բարձր է գնահատվել հետագա դարերի հայ բանասերների կողմից։ Սակայն մինչև օրս չկան միջնադարյան այս մեծահամբավ մտածողի ու գործչի աշխարհայացքը վեր հանող բիչ թե շատ ամբողջական և ծավալուն ուսումնասիրություններ և, այս պատճառով, դեռևս նկատելի բաց գոյություն ունի Իմաստասերի աշխարհայացքի մասին մեր ըմբռնումների մեջ։ Սույն հոդվածով մենք փորձ ենք անում լուսաբանել Իմաստասերի հայացքների մեկ, այն է՝ փիլիսոփայական կողմը՝ աշխատելով մասամբ լրացնել միջնադարի այդ մտածողի հայացքների մասին մեր իմացության մեջ գոյություն ունեցող բացը։

Իմաստասերն ապրել է XI դարի երկրորդ կեսում և XII դարի առաջին քառորդում, երբ Հայաստանը թևակոխել էր զարգացած ֆեոդալիզմի ժամանակաշրջանը։ Չնայած որ Հայաստանը հենց այդ տարիներին կորցնում է իր քաղաքական ինքնուրույնությունը և ընկնում սելջուկների տիրապետության տակ (Իմաստասերի մանկապատանեկան տարիները զուգադիպում են սելջուկ թուրքերի՝ Հայաստան կատարած առաջին արշավանքներին), բայց ինչպես ցույց են տալիս պատմական փաստերը, Հայաստանում տնտեսության և կուլտուրայի բնագավառում X դարի քսանական թվականներից սկսված վերելքը ընդհանուր առմամբ շարունակվում է։ Այդ դարերում բարձր զարգացման էին հասել գյուղատնտեսությունը, արհեստները ու առևտուրը։ Հայաստանում կային բազմաթիվ շեն ու բազմամարդ քաղաքներ, որոնք արհեստների ու առևտրի խոշոր կենտրոններ էին։ Հայաստանով էին անցնում Արևելքի և Արևմուտքի միջև կատարվող առևտրի գլխավոր ուղիները, որի հետևանքով ծաղկում ու բարգավաճում են տարանցիկ առևտրական ճանապարհների վրա գտնվող հայկական քաղաքները։ Հայաստանը ներգրավվել էր միջազգային ապրանքափոխանակության մեջ և այդ բնագավառում նշանակալից դեր էր խաղում։ Առևտրի ու արհեստների ընդհանուր զարգացման պայմաններում ընդլայնվում է ներքին շուկան, հրապարակ են գալիս առևտրա-վաշխառուական կապիտալի ներկայացուցիչներ, որոնք իրենց ձեռքում կենտրոնացնում են մեծ հարստություններ, ճոխ ու շռայլ կյանք են վարում։ Խորանում է հասարակության սոցիալական շերտավորումը։ Փարթամության մեջ ապրող մեծատունների, առևտրա-վաշխառուական կապիտալի ներկայացուցիչների կողքին իրենց խղճուկ գոյությունն են քարշ տալիս բազմաթիվ ընչազուրկներ, օրավարձով ապրող աղքատ, տնանկ, սեպագործ մարդիկ։ Հասարակության մեջ մեծ դեր է խաղում փողը, որի կարիքը զգում են հասարակության բոլոր խավերը։ Վերջապես, որպես հետևանք այս ամենի, ծաղկում են ապրում աշխարհիկ կյանքն ու բարքերը։

Սրանք էին ահա Իմաստասերի ապրած ժամանակաշրջանի բնորոշ գծերը, որոնք իհարկե, չէին կարող չանդրադառնալ Իմաստասերի աշխարհայեցողության վրա։ Նրա հայացքներին հատուկ են առաջավոր շատ կողմեր։ Այսպես, նա հանդես է գալիս բնական գիտությունների զարգացման պահանջով, քննադատում է սխոլաստիկան ու առասպելաբանությունը, մերժում է հեղինակությունները գիտական ճշմարտություններ սահմանելու խնդրում, և գիտելիքներ ձեռք բերելու հարցում մեծ նշանակություն է տալիս փորձին, պահանջում է փորձով ստուգել մեր գիտելիքների հավաստիությունը։ Իմաստասերի հայացքներում արտահայտվող այս առաջավոր կողմերը, անշուշտ, արդյունք են նրա ապրած ժամանակաշրջանի սոցիալ-տնտեսական տեղաշարժերի։

Իր սոցիալական հայացքներով Իմաստասերը հանդես է գալիս որպես ֆեոդալական կարգերի պաշտպան։ Սակայն նա քննադատում է ֆեոդալական բռնապետությունը և մարդկանց կոչ է անում միմյանց հետ սիրով միաբանել. «Մարդիկ,— գրում է նա,— պարտին ոչ միայն խառն բնակել, այլև սիրով միաբանել»[1]։ Նա պահանջում էր, որ մարդկանց հարաբերությունները խարսխված լինեն փոխօգնության, գթասրտության, համերաշխության վրա։ Մարդասիրությունը նա շատ բարձր էր դասում և հավասարեցնում, նույնացնում էր այն աստվածասիրության հետ։ «Ազգակից են այս երկու առաքինությունքս միմեանց՝ աստուածասիրութիւնն և մարդասիրութիւնն»[2],— գրում է նա։ Իմաստասերի սոցիալ-քաղաքական հայացքները սահմանափակվում են գոյություն ունեցող ֆեոդալական կարգերը բարոյական առումով բարելավելու, ֆեոդալական հարաբերությունները արդարացիորեն, բանականորեն կազմակերպելու շրջանակներում։ Հենց սրանում էլ թաքնված են նրա հայացքների հակասական էության արմատները։

Իմաստասերի ինչպես սոցիալ-քաղաքական, այնպես էլ փիլիսոփայական հայացքների մեջ գոյակցում են հակասական, իրարամերժ սկզբունքներ։ Նրա փիլիսոփայության մեջ քրիստոնեական-կրոնական, իդեալիստական ըմբռնումների կողքին մենք հանդիպում ենք մատերիալիստական, առաջավոր տենդենցների։ Իմաստասերը մի կողմից մեծ նշանակություն է տալիս գիտությանը, գտնում է, որ գիտությանը պետք է անպայմանորեն տիրապետել և պայմաններ ստեղծել նրա հետագա զարգացման համար, ծաղրում է «իմաստակներին», պահանջում է խորապես ուսումնասիրել բնությունը, բնության երևույթներին բնական բացատրություն տալ և փորձով համոզվել գիտելիքների հավաստիության մեջ, մտքեր, որոնք ակնհայտ կերպով հակասում են կրոնական դոգմաներին, իսկ մյուս կողմից դիմում է հավատին և պահանջում է սեր, երկյուղածություն, հնազանդություն աստվածային օրինականության առաջ։

Հովհաննես Իմաստասերը, ինչպես միջնադարյան հայ մտածողների ճնշող մեծամասնությունը, փիլիսոփայության հիմնական հարցը, այսինքն՝ ոգու և բնության, մտածողության և կեցության փոխհարաբերության հարցը՝ նրանց առաջնության տեսակետից, լուծում է իդեալիստորեն, որը նրա մոտ արտահայտվում է հիմնականում կրոնական աշխարհայեցողության ձևով։ Սակայն, նա ոչ թե դոգմատիկորեն հավաստում է հարցի կրոնական ըմբռնումը, այլ աշխատում է տրամաբանորեն հիմնավորել ու փիլիսոփայորեն մտապատկերել այն՝ օգտագործելով արիստոտելյան հնարավորության և իրականության կատեգորիան և ընդունելի դարձնել բանականության համար։

Աշխարհի, բնության առաջացումը, ըստ Իմաստասերի, հնարավորությունից իրականության անցման պրոցես է։ Բայց ի՞նչն է, որ հնարավորությունից իրականություն է դառնում և ինչպե՞ս է կատարվում այդ հնարավորությունից իրականության անցումը։

Պատասխանելով այս հարցին, Իմաստասերը առարկում է նախ՝ այն բնագետներին ու փիլիսոփաներին, որոնք, ընդունելով, որ նյութը որևէ բանից անկախ, հավերժ գոյություն է ունեցել, «զնիւթն առնուն», այսինքն՝ որոնք մերժելով աստծո գոյությունը, որպես սկզբնական նյութ վերցնում են մատերիան և կանգնած են այն տեսակետի վրա, թե հենց նյութը, մատերիան ինքը, առանց որևէ ուժի միջնորդության, իր մեջ ունի հնարավորությունից իրականության անցնելու պատճառը, որ մատերիային ներհատուկ է սկզբնական անձև վիճակից վերածվել բազմաձև, բազմազան աշխարհի։

Մյուս կողմից՝ Իմաստասերն առարկում է նաև այն մտածողներին, որոնք պնդում են, թե «Գոլ յաւետակից զնիւթն աստուծոյ»[3], այսինքն գտնում են, թե նյութը և աստված միաժամանակ և հավերժ գոյություն են ունեցել. նյութը «յաւետակից» է եղել աստծուն, միայն թե նյութը եղել է անձև, իսկ աստված այդ անձև նյութին ձև է տվել, ձևավորել է։ «Արտաքոյ իմաստութեան աշակերտքն,— գրում է Իմաստասերը,— ասացին՝ յաւետակից աստուծոյ զնիւթն, կամ զաստուած կարօտ նիւթոյ, և ոմանք՝ բնութեամբ գոլ զամենայն և առանց արարիչ»[4]։

---

[1] «Լուծմունք եօթնից գրոցն Փիլոնի Իմաստասիրի Եբրայեցւոյ», Մատենադարան, ձեռ. № 2595, էջ 274բ։

[2] Նույն տեղում, էջ 270բ։

[3] «Յովհաննու քահանայի յաղագս խրատու մանկանց սուգ ինչ ընախաւսութեամբ», Մատենադարան, ձեռ. № 5619, էջ 119ա։

[4] «Յովհաննու քահանայի յաղագս Նշանակ հաւատոյ Նիկիականն», Մատենադարան, ձեռ. № 2751, էջ 142ա։

Այս երկու տեսակետն էլ նա անընդունելի է գտնում։ Առաջին տեսակետը անընդունելի է հետևյալ պատճառներով.

1. Եթե ընդունում ենք առաջացումը և գտնում ենք, որ աշխարհի «բոլոր տեսակները», աշխարհի բազմազանությունը առաջացել են սկզբնական նյութից, ապա այդ դեպքում պետք է ընդունենք, որ սկզբնական նյութը ևս առաջացել է, քանի որ այն և նրանից առաջացած բազմաթիվ տեսակները փոխհարաբերում են իրար այնպես, ինչպես մասը՝ ամբողջին, իսկ մասը ամբողջից բաժանել չի կարելի։ Ուրեմն, եթե աշխարհի տեսակներն առաջացել են սկզբնական նյութից, ապա ինքը սկզբնական նյութը ևս որևէ բանից գոյացել է, և, ընդհակառակը, եթե սկզբնական նյութը չի առաջացել, ապա չեն առաջացել և նրա մասերը։ Իմաստասերը գրում է. «թէ աշխարհիս տեսակքն եղականք են՝ նա ասել պիտի, թէ և այն առաջին նիւթն, որ կայր՝ եղական է, քանզի մասն ի բոլորէն ոչ բաժանի, ապայ թէ՝ այն նիւթն անլինելի է, ոչ է նայ ի նախախնամութենէն և ոչ իւր մասունքն եղական է՝ տունք և կենդանիք»[1]։

2. Նյութը հավերժ գոյություն չի ունեցել, քանի որ դրանով՝ ուղղակի մերժվում է աստծո արարիչ լինելու գաղափարը։ «Երբ զնիւթն միշտ կու ասեք և ոչ յաստուծոյ սկսեալ, ապա զաստուած արարիչ չէք յասել»[2],— գրում է Իմաստասերը։ Բացի դրանից՝ «նիւթն անմարմին ոչ ինչ է» և ամենակարող արարիչը «ոչ կարաւ նիւթոյ աւտար»[3]։

Անդրադառնալով երկրորդ տեսակետին, ըստ որի նյութը և աստված «յաւետակից» են և աստված միայն նյութին ձև է տվել, Իմաստասերը գտնում է, որ այս տեսակետի պաշտպանները հետևողական չեն։ Նրանք, հակասելով իրենց իսկ, ընդունում են. աշխարհի ստեղծագործված, սկզբնավորված լինելու թեզը, քանի որ նրանք ընդունում են, որ այն ժամանակ, երբ կար նյութը, աշխարհը դեռ չկար, և աստծո միջնորդության շնորհիվ միայն աշխարհը աշխարհ դարձավ, «զարդարելովն եղև աշխարհ աշխարհս»։ Ուրեմն, եզրակացնում է Իմաստասերը, այս տեսակետի պաշտպանները դարձյալ ընդունում են աշխարհի սկզբնավորումը, թեպետև դտնում են, որ աշխարհն անսկիզբ է։ Այս կապակցությամբ նա գրում է. «զանզարդ նիւթն ասէին, թէ միշտ էր և աստուած զայն զարդարեաց, որ է աշխարհս, առ որս ասեն, թէ երբ զարդարեաց զանզարդն, ապա չունէր զարդ և չէր աշխարհ և զարդարելովն եղև աշխարհ աշխարհս։ Ապա դիա՞րդ անսկիզբն ասեք զաշխարհ, որ յետոյ զարդարելովն եղև, որպէս դուք ասէք, թէ զարդարեաց միայն զնիւթն։ Թէպէտ և զայդ ասէք, սակայն և այդպէս սկիզբն ցուցանէք»[4]։

Այսպիսով, Իմաստասերը իդեալիզմի դիրքերից քննադատում է աշխարհի առաջացման վերաբերյալ մատերիալիստական և դուալիստական տեսակետները։ Նրա քննադատությունն ուղղված է, ինչպես դժվար չէ նկատել, անտիկ մտածողների դեմ, որոնց նա աշխատում է հերքել՝ նրանց մատերիալիստական աշխարհըմբռնման մեջ տրամաբանական հակասություններ բացահայտելու ճանապարհով՝ հենվելով ֆորմալ տրամաբանության վրա։

Իմաստասերը մերժում է անտիկ աշխարհի մատերիալիստական ուսմունքները։ Նա դեմ է էպիկուրի՝ նյութի հավերժական լինելու մասին կարծիքին։ Էպիկուրը, գրում է նա, «յաւետակից ասիցէ զնիւթն աստուծոյ, թէ հիւղէ էր իրր և փոշի, որ խաղա ի շողն յոր մեզ չորս տարս արար»[5]։ Նա մերժում է աշխարհի, բնության առաջացման մասին Պլատոնի, Պիհոռնի հետևորդների և էպիկուրյանների ուսմունքը։ «Այդ՝ որ նորա ասեն,— գրում է Իմաստասերը,— պիհոռնացիքն և ակադեմիականքն և էպիկուրեանքն նախանձու և հակառակող բանք են, մեր ճմարիտ և իմաստուն բանս խնդրեմք և ընդդէմ նոցա վիճող բանից դնեմք»[6]։ Ընդհանրապես Իմաստասերը կատեգորիկ կերպով ժխտում է աշխարհի առաջացման մասին բոլոր այն «իմաստասերների» ուսմունքները, որոնք այս կամ այն կերպ շեղվում են աստծո արարչագործությունը ընդունելու տեսակետից. «զոր իմաստունքն ասացին յայլ և այլ պատճառէ եղեալ զաշխարհս և անապական. արդ՝ մի լիցի զայս ասել, բայց միայն յաստուծոյ սկսեալ»[7]։

Կանգնած լինելով հիմնականում քրիստոնեական-կրոնական մտայնության դիրքերում, Հովհաննես Իմաստասերը աշխարհի առաջացման հարցում զարգացնում է քրիստոնեական կրոնին

---

1 Մատենադարան, ձեռ. № 2595, էջ 246ա։

2 Նույն տեղում, էջ 242ա։

3 Ա. Գ. Ալրբանիանյան, Հովհաննես Իմաստասերի մատենագրությունը, Երևան, 1956։ էջ 306։

4 Մատենադարան, ձեռ. № 2595, էջ 242ա։

5 «Լուծմունք նախախնամութեան Փիլոնի», Մատենադարան, ձեռ. № 59, էջ 11բ։

6 Մատենադարան, ձեռ. № 2595, էջ 242բ։

7 Նույն տեղում։

ըստ էության չհակասող ըմբռնում։ Աշխարհի, տիեզերքի գոյացումը, ըստ նրա, հնարավորությունից իրականության անցման պրոցես է։ Դեն նետելով արիստոտելյան հնարավորության և իրականության կատեգորիայի մատերիալիստական բովանդակությունը, Իմաստասերը այդ պրոցեսը պատկերացնում է հետևյալ կերպ։ Նա գտնում է, որ եղել է ժամանակ, երբ դեռ գոյություն չի ունեցել որևէ ինչ, և գոյություն է ունեցել միայն աստված։ Նա իմացել է այն ամենի կազմությունը, ինչ որ այժմ գոյություն ունի, ինչ որ նա ինքը հետագայում ստեղծեց, այսինքն, ըստ նրա, ամբողջ բնությունը որպես ռեալականություն դառնալու հնարավորություն կար աստծո մտքում։

Աստված, Իմաստասերի ըմբռնմամբ, դուրս է ժամանակից ու տարածությունից, անորակ է ու անքանակ։ «Աստուած,— գրում է նա,— անորակ, անքանակ, ոչ ի տեղոջ»[1]։ Նա ամեն ինչի ստեղծողն է. նա որպես ստեղծագործող ամեն ինչ բովանդակել է իր մեջ, բայց ինքը ոչ մի բանի մեջ չի բովանդակվում։ «Հաստիչ բնութեան և գոյացութեան, որ զամենայն բովանդակէ և յիմեքէ ինքն ոչ բովանդակի»[2]։ Այս պատճառով, գրում է Իմաստասերը, երբ ասում ենք, թե գոյություն ունեցողը սահմանվում է երկու կերպ, որպես հնարավորություն և որպես իրականություն («զաւրութեամբ» և «ներգործութեամբ»), ապա «զաւրութեան» տակ միշտ նկատի ունենք արարիչը, որովհետև անցումը անորոշությունից դեպի որոշակիություն, անկատարելիությունից դեպի կատարելիություն, անձևությունից դեպի որոշակի ձև, կատարվում է աստծո կամքով, նրա գիտությամբ։ «Զաստուած,— գրում է Իմաստասերը,— ո՛չ անգործ երբեք գոլ և պարապորդ նախ քան զլինելն ամենայնի... այլ զաւրութեամբ միշտ գոլ արարիչ և իմանալ աստուածայպէս զամենայնի գեղեցկայարմար և քաջայղիր կազմութիւն։ Քանզի ոչ ժամանակաւ աստուածութիւն եկեսցէ ի կատարումն։ Եթէ արարիչն ոչ գոլ անկատարութիւն իցէ, իսկ գոլն արարիչ՝ կատարելութիւն, ապա ուրեմն իմանալովն, զոր Եթէ զաւրութեամբ որ ասասցէ, եղիցի միշտ արարիչ»[3]։

Սակայն ինչի՞ց աստված ստեղծեց աշխարհը։

Ահա այստեղ էլ փիլիսոփան ձգտում է բանականության համար ընդունելի դարձնել աշխարհի գոյացման մասին քրիստոնեական-կրոնական ուսմունքը։

Հայտնի է, որ կրոնական պատկերացման համաձայն, աստված աշխարհը ստեղծեց ոչնչից։ Իմաստասերին չի բավարարում այսպիսի պատասխանը։ Իրավացի համարելով այն առարկությունը, թե ինչպե՞ս ոչնչից կարող է որևէ ինչ լինել, «յոչնչէ ի՞նչ ցեղ իրք լինի»[4], նա աշխատում է բանականության համար ընդունելի տեսակետ առաջ քաշել։

Ըստ Իմաստասերի, այս իրականությունը ստեղծված է աստծո կողմից ոչ թե ոչնչից, այլ անմարմին նյութից, որը, սակայն, ըստ էության տարբերվում է սովորական այն տարրերից, որոնցից կազմված են աշխարհը, մեզ շրջապատող առարկաները։ Սկզբնական նյութը, որից աստված ստեղծել է աշխարհը, դա կոնկրետ, շոշափելի այն նյութը չէ, որը «ենթակա» նյութ է հանդիսանում բնության զանազան գոյացումների համար, ինչպես, օրինակ, բուրդը նյութ է ծառայում գործվածքի համար։ Այդ անմարմին նյութը աստծո կամքն է, որը և նյութ է հանդիսացել աստծո համար՝ ստեղծելու կոնկրետ իրերը։ «Թուի ինձ,— գրում է Իմաստասերը,— ոչ մեղանչել, եթէ զկամսն զայն և զիմացումն աստուածային մշտնջենաւորական յամենայնի կազմութիւն անուանեսցէ ոք նիւթ անմարմին, յորմէ տեսակագործեցան եղականք։ Նիւթ ասեմ ոչ իբրև մասն ինչ և ենթակայ կազմածոյն, ըստ որում ասր ոստայնի, այլ անմարմին բարէգործակ կամս և զաւրութիւն։ Քանզի այլ է նիւթ ենթակայ գործոյ և այլ զաւրութիւն և կամք աստուծոյ, զի սա առնէ, իսկ նայ լինի»[5]։

Բայց սրանից հետևում է նաև այն, որ աստծո համար ստեղծագործության նյութ է հանդիսացել հենց աստվածն ինքը, որովհետև նրա «կամքն», «զաւրութիւնն» գոյություն ունեն նրա մեջ, նրա հետ միասին և ոչ թե նրանից անկախ, հանդիսանում են նրա մասը, իսկ, ինչպես ասում է Իմաստասերը, մասն ամբողջից չի կարելի բաժանել՝ «մասն ի բոլորէն ոչ բաժանի»[6]։ Այստեղից միտք է ծագում՝ արդյո՞ք աստված ինքը չէ, որ վերածվում, վերափոխվում է բնու-

---

1 Մատենադարան, ձեռ. № 2751, էջ 142ա։

2 Նույն տեղում։

3 «Հովհաննես Իմաստասերի մատենագրությունը», էջ 306։

4 Մատենադարան, ձեռ. № 59, էջ 17բ։

5 «Հովհաննես Իմաստասերի մատենագրությունը», էջ 306—307։

6 Մատենադարան, ձեռ. № 2595, էջ 246ա։

թյան, հնարավորությունից դառնում է իրականություն։ Բայց Իմաստասերը նման եզրակացության չի հանգում, քանի որ այն վտանգավոր էր եկեղեցու համար։ Եթե աստված վերածվեր և միախառնվեր բնությանը, ապա նա որպես այդպիսին կդադարեր գոյություն ունենալուց։ Նման եզրակացությունը մոտենում է պանթեիզմին, իսկ պանթեիզմը, միանգամայն հասկանալի պատճառով, հակադրվում է կրոնական աշխարհայացքին։

Այսպիսով, ինչպես ակնհայտ է, փիլիսոփայության հիմնական հարցին Իմաստասերը տալիս է իդեալիստական լուծում, որը չնայած փիլիսոփայական երանգավորմանը, համընկնում է հարցի քրիստոնեական—կրոնական ըմբռնմանը։ Փիլիսոփայության հիմնական հարցի մեկնաբանման ընթացքում՝ Իմաստասերի ամբողջ մտակառուցման մեջ արժեքավորն այն է, որ նա հանդես է գալիս ոչ թե որպես կրոնական դոգմաները կուրորեն կրկնող մի եկեղեցական, այլ որպես փիլիսոփա և մտածող, որն աշխատում է տվյալ հարցի կրոնական ըմբռնումը ընդունելի դարձնել բանականության համար։

Իմաստասերը հասկանում է, որ աշխարհի արարչագործության իր ըմբռնումը դժվար ապացուցելի է։ Դիտակցելով այս, աշխարհի՝ աստծո կողմից ստեղծագործված լինելու իր տեսակետը Իմաստասերը դասում է հավատի բնագավառը։ Նա գրում է. «զի հաւատով ճանաչեմք, եթէ աշխարհս ի աստուծոյ սկսեալ է և ի նմանէ նախախնամի և ոչ են ինչ-ինչեղ և անխնամ, որպ'ս հեթանոսաց իմաստունքն ասացին, զոր և երանելին Փիլոն խրատելով ուսուցանէ զԱղ'քսանդրու և զԼուսիմաքոս՝ ի բաց կալ լայնպիսի սուտ կարծեաց և հաւանել աստուածային օրինաց վարդապետութեանն, որով վարժեալ էր Փիլոն»[1]։

Ըստ Իմաստասերի աշխարհը, ամբողջ բնությունը և մարդը մեկ անգամ ընդմիշտ ստեղծված լինելով աստծո կողմից որպես նոր որակ այլևս տարբերվում են նրա արարչից։ Աստված ստեղծելով աշխարհը «զիւր կնիքն դնէ ի վերա ամենեցուն»[2], բայց, նրա ըմբռնմամբ, «այլ է աստուածայինն և այլ մարդկայինն գուացութիւն ըստ ինքեան»[3]։ Նոանց տարբերությունը արտահայտվում է նաև այն բանում, որ նրանցից մեկը՝ աստված, անսկիզբ և անվախճան է, իսկ մյուսը՝ բնությունը, բուսական և կենդանական աշխարհը, մահկանացու և վախճանական են[4]։

Ընդունելով, որ աշխարհը աստծո ստեղծագործություն է, Իմաստասերը միաժամանակ զարգացնում է այն տեսակետը, թե բնությունը, ստեղծագործված լինելով, ինքը ևս հանդես է գալիս որպես ստեղծագործող։ «(Աստուած) ոչ միայն արարիչ ասի,— գրում է Իմաստասերը,—այլև արարչագործ, զի իւր արարածն այլոց արարիչ լինի»[5]։ Այսինքն, բնությունը՝ աստծո ստեղծագործությունը, արդեն առանց իրեն ստեղծողի միջամտության, ինքը հանդես է գալիս ստեղծողի դերում։ Բնությունը տվյալ դեպքում իր արարչից տարբերվում է նրանով, որ նա որպես ստեղծագործող հայտնվում է աստծուն. «պարտ էր, որ յառաջ իրացն սկիզբն լինի և ապա այլոն ի նմանէ աճեն»[6]։ Բնության մեջ, իրերին ու երևույթներին ներհատուկ օրինաչափությամբ, տեղի են ունենում ծագում, զարգացում, ընչացում և այլ երևույթներ։ Բնության բոլոր իրերն ու երևույթները, ըստ Իմաստասերի, որոշ պատճառականության արդյունք են։

Ամբողջ արտաքին աշխարհը, ասում է Իմաստասերը հետևելով Արիստոտելին, գոյություն ունի երկու կերպ՝ «զաւրութեամբ և ներգործութեամբ», այսինքն՝ որպես իրականություն և որպես հնարավորություն։ Նա գրում է. «Երկոքին միայն են, որոնց զինչ-լութիւն ամենայնի սոնոգին սահմանել... զզաւրութեամբ ասել և զներգործութեամբ»[7]։ Սա նշանակում է, որ աշխարհում ամեն ինչ գոյություն ունի կամ արդեն որպես ռեալականություն՝ տեսանելի, շոշափելի կամ որպես ապագայում այդպիսին դառնալու հնարավորություն։ Բառահատելով վերը բերած միտքը, Իմաստասերը գրում է. «Եւ է զաւրութեամբ ա-մատ իմն և սկիզբն ի նեղգործութիւն գոյ հանդերձելոցն։ Այսինքն՝ որ չկն է այնինչ կամ թէ էութիւն դգալի, բայց կարութիւն է լինել յայնմանէ, որ ի լինելոցն է»[8]։ Այսպիսով, բնության մեջ անընդհատ տեղի է ունենում անցում հնարավորությունից իրականության, կամ առաջացում, ծագում։

---

1 Մատենադարան, ձեռ. № 2595, էջ 242ա։

2 Նույն տեղում, էջ 261ա։

3 Մատենադարան, ձեռ. № 2751, էջ 227ա։

4 Տե՛ս նույն տեղում, էջ 220ա և 227ա։

5 Մատենադարան, ձեռ. № 2595, էջ 274բ (ընդգծումն իմն է—Գ. Գ.)։

6 Նույն տեղում, էջ 242բ։

7 «Հովհաննես Իմաստասերի մատենագրությունը», էջ 306։

8 Նույն տեղում,

Կենդանական և բուսական աշխարհը, բնության բոլոր իրերը, որոնք որոշակի որակ ունեցող մարմիններ են, համաձայն Իմաստասերի, կազմված են տարրերից։ «Զորակութիւնսն ունօղ հիւթոց մարմնոյն, որ են խառնուածք տարերց և մարդ ընդ միմեանս բնաւորապէս ունեն»[1]։ Տարրերն են «մասունք աշխարհիս և բնության բոլոր առարկաները, անշունչ թե շնչավոր, տարրերի խառնուրդ են՝ որոշակի փոխհարաբերությամբ։ Փոփոխությունը իրերի և առարկաների մեջ տեղի է ունենում տարրերի փոխհարաբերությունը փոխվելու շնորհիվ։

Հետևելով անտիկ որոշ փիլիսոփաների, Իմաստասերը ևս կանգնած է այն տեսակետի վրա, թե տարրերը չորսն են՝ օդը, հողը, ջուրը և կրակը։ Այս տարրերը իրարից տարբերվում են իրենց կշռով և հատկություններով։ Սրանք միմյանց ներհակ են, բայց «թշնամի և հակառակ են իրերաց, այլ ի սոցանէ եղև աշխարհս»[2]։ Բնության չորս տարրերը երբեք միևնույն վիճակի մեջ չեն մնում։ «Տարերքն շարժական և փոփոխական են»[3],— գրում է Իմաստասերը։ Նրանք փոխակերպվում են մեկը մյուսին, մի տարր որոշակի պայմանների առկայության դեպքում անցնում է մյուսին, այնպես որ մեկի էությունից գոյանում է մյուսը։ «Տարերքն ի միմեանց էութենէ գոյանան, որպէս ի ջեռնուլ ջրոյ և ի շիջեալ հրոյ օդն լինի, նոյնպէս և ջուրն սկանայ և լինի հող, նոյնպէս և այլն»[4]։ Տարրերի այս փոխակերպումը կատարվում է իրենց՝ տարրերի բնությանը ներհատուկ օրինաչափությամբ։

Իմաստասերը գտնում է, որ բնության բոլոր իրերն ու առարկաները անընդհատ շարժվում և փոփոխվում են, բայց նա այդ փոփոխությունը հիմնականում մետաֆիզիկոսն է ընկալում։ Նա ենթադրում է, որ բնության մեջ չի առաջանում նոր իր, առարկա, որը չլիներ առաջ։ Այսպես՝ նա կարծում է, թե կենդանիների նոր տեսակներ երբեք չեն գոյանում և եղածներն էլ չեն ոչնչանում։ «Մի ապականեսցին սեռք և տեսակ կենդանեաց,— գրում է նա,— այլ փոխանորդութեամբ մնասցէ ամենայն առանց եղծման և ապականութեան ի պակասութենէ նմա»[5]։ Իմաստասերի մոտ մենք չենք հանդիպում աշխարհի բնապատմական զարգացման տեսության, և մեզ թվում է, այդպիսի տեսություն նա չէր էլ կարող ստեղծել, քանի որ այն բացարձակ կերպով կհակասեր եկեղեցու ըմբռնումներին։

Սակայն, քանի որ Իմաստասերը ծանոթ էր անտիկ փիլիսոփայության նշանավոր դիալեկտիկ մտածողներին՝ Հերակլիտին, Արիստոտելին, և հայտնի չափով կրում էր նրանց ազդեցությունը, նրա հայացքներում նկատվում են դիալեկտիկայի որոշ տարրեր։ Այսպես, ըստ Իմաստասերի, բնության մեջ ամեն ինչ գտնվում է շարժման, փոփոխման վիճակում և ունի իր սկիզբն ու վախճանը։ «Ապականութիւն,— գրում է նա,— տնկակից է ամենայն իրաց, և՛ կենդանեաց, և՛ անշնչաց, որոց և նուազելն շարժակցի»[6]։ Ոչինչ չկա աշխարհում, որ հավերժական լինի, «ինչ ցեղ չասեմ ապականացու զաշխարհս, այլ երազահանական առասպելացն հաւանիմ»[7],—ասում է Իմաստասերը։

Բացի դրանից, Իմաստասերը խոսում է նաև բնության իրերի մեջ գոյություն ունեցող հակադրությունների մասին։ Այդ հակադրությունները գոյանում են իրարամերժ տարրերից, որոնք ախոյան լինելով հանդերձ գտնվում են միևնույն իրի մեջ, հակադիր լինելով՝ «սիրով» միանում են իրար։ «Չկան այլ ինչ իրք,—գրում է նա,— որ սիրեն զմիմեանս և միաբանին, որպէս մասունք աշխարհիս, որ են տարերքդ»[8]։ Հակադրություններն օրինաչափ ու անհրաժեշտ են բնության բոլոր առարկաների համար։ Ամբողջ բնությունը հակադրությունների ներդաշնակ միացում է, ինչպես քնարի հաստ ու բարակ լարերը միասին հնչելով ստեղծում են ներդաշնակություն, այնպես էլ հակադրությունները իրերի մեջ միանում են որպես ներդաշնակ միասնություն։ «Բնութիւնն ամենայն իրաց,— գրում է Իմաստասերը,— ի յարմարութենէ ընդդիմակաց լինիցի, որպէս է տեսանել ի լարս քնարից, յորժամ սուրն և բութն ընդ իրար՝ միաբան հնչեն»[9]։

---

1 Մատենադարան, ձեռ. № 2751, էջ 212ա։
2 Մատենադարան, ձեռ. № 2595, էջ 216բ։
3 Նույն տեղում, էջ 278բ։
4 Նույն տեղում, էջ 260բ։
5 «Հովհաննես Իմաստասերի մատենագրությունը», էջ 303։
6 Մատենադարան, ձեռ. № 2751, էջ 221ա։
7 Մատենադարան, ձեռ. № 2595, էջ 242բ։
8 Նույն տեղում, էջ 260բ։
9 Նույն տեղում, էջ 255ա։

Բնության իրերի այսպիսի ըմբռնումն Իմաստասերի կողմից չափազանց արժեքավոր է, բայց նրա աշխատություններում չի ստանում այնպիսի ծավալուն շարադրանք, որ հնարավոր լիներ հարցը քննարկել ու վերլուծել իր մանրամասնությունների մեջ։ Սակայն, հենվելով բնության իրերի նրա ըմբռնումների վրա, կարելի է անել այն հետևությունը, որ Իմաստասերը կանգ չի առնում իրերի մեջ գոյություն ունեցող հակադրությունների փաստի լոկ արձանագրման վրա։ Նա գտնում է, որ այդ հակադրությունները հիմք են հանդիսանում բնության իրերի փոփոխության համար։ Այսպես, մենք արդեն ասացինք, որ ըստ Հովհաննես Իմաստասերի բնության բոլոր առարկաները՝ թե՛ շնչավոր, և թե՛ անշունչ, կազմված են տարրերից, որոնք յուրաքանչյուր առարկայի մեջ հանդես են գալիս որոշակի փոխհարաբերությամբ։ Քանի դեռ այդ հակադիր տարրերը իրի մեջ գտնվում են «չափաւորութեան», «բարեխառնութեան» վիճակում, իրը պահպանում է իր գոյաձևը, բայց երբ այդ վիճակը խախտվում է, իրը սկսում է քայքայվել։ Այս ամենից հետևում է, թե, ըստ Իմաստասերի, բնության իրերը հակադրությունների միասնություն են և այդ միասնությունը հարաբերական է։ Միասնությունը պահպանվում է այնքան ժամանակ, քանի դեռ հակադրություններից, հակադիր տարրերից մի կողմը չի գերակշռել մյուսի նկատմամբ, չի «հաղթահարել»։ Մյուսին։ Երբ այսպիսի գերակշռությունը դառնում է բացարձակ, փոխվում է իրի գոյաձևը։ Տարրերի «ի հաղթահարելն ի միմեանց,— գրում է Իմաստասերը,— և ի յառաւելոյն կամ ի պակասել Բաս զբարեխառնութեանն և զչափաւորութեանն հարկ է վախճանել կենդանւոյն»[1]։

Իմաստասերը գտնում է, որ ամեն ինչ ունի իր պատճառական կապակցությունը, որ առանց պատճառի ոչինչ լինել չի կարող. «Առանց պատճառի չկայ իրք, և ես քեզ վկայեմ»[2],— գրում է նա։

Այսպիսով, ինչպես տեսնում ենք, Իմաստասերի փիլիսոփայական-բնագիտական հայացքներում արտահայտվում են բնության իրերը և երևույթները դիալեկտիկորեն ըմբռնելու որոշ էլեմենտներ։ Անշուշտ, ինչպես դժվար չէ համոզվել, դիալեկտիկայի այդ էլեմենտները հետևանք են անտիկ փիլիսոփայության գրական ազդեցության։

Հովհաննես Իմաստասերը գտնում է, որ եթե աշխարհի՝ աստծո կողմից արարչագործված լինելը ճանաչվում է հավատով, ապա բնության երևույթները, իրերը կարելի է ճանաչել դրանք ուսումնասիրության ենթարկելով միայն։ Նա պահանջ է առաջադրում՝ թափանցել բնության գաղտնիքների մեջ, բացահայտել նրանց էությունը, խորապես ճանաչել մեզ շրջապատող աշխարհի օրինաչափությունները։ Իսկ այս պահանջն իր ժամանակին անշուշտ առաջավոր էր։ Չպետք է մոռանալ, որ նույն ժամանակ կրոնական ուղղափառ մտայնությունը քարոզում էր հրաժարվել ամեն տեսակ աշխարհիկ գործունեությունից, ճգնավորական կյանքի դիմել, մեռցնել մարմինը՝ անդրաշխարհային կյանքում երջանիկ լինելու համար և այլն, և այլն։

Իմաստասերն աշխարհի իրերն ու երևույթները աշխատում էր մեկնաբանել բնագիտական տեսանկյունից։ Նա դեմ էր բնության երևույթների միստիֆիկացմանը և պայքարում էր սնոտիապաշտության ու առասպելաբանության դեմ։ «Վասն կիկլոպացոց երկրին զինչ որ ասեն սուտ է և առասպել»[3],— գրում է նա։ Իմաստասերը բնության երևույթներն ամեն կոնկրետ դեպքում աշխատում էր բացատրել ոչ թե գերբնական, այլ բնության ուժերով՝ իհարկե, իր դարաշրջանի գիտության նվաճումների սահմաններում։

Ճշմարտության առաջ մեղանչած չլինելու համար, սակայն, պետք է նշել նաև, որ Իմաստասերը միշտ չէ, որ կարողանում էր խուսափել բնական երևույթների առասպելական միստիկական բացատրությունից. նա լիովին չի կարողանում դուրս գալ կրոնա-միստիկական մտայնության սահմաններից։

Ըստ Իմաստասերի, մարդը, ի տարբերություն գոյություն ունեցող բոլոր մյուս կենդանի արարածների, բանական էակ է, միայն նա է օժտված բանականությամբ։ Իհարկե, Իմաստասերը ևս մտածում էր, թե բանականությունը մարդուն տվել է աստված։ Մարդը ստեղծված է որպես բանական էակ, որպեսզի իր գոյության պահպանման համար կարողանա ճանաչել աշխարհը, նրա իրերն ու երևույթները։ Իր մի կրոնական աշխատության մեջ նա այն միտքն է արտահայտում, թե մահկանացու մարդը, որը միանգամայն տարբերվում է աստծուց, հոգու և մարմնի անբաժանելի միասնություն է։ Նա գրում է. «Վասն այսպէս գոլոյ զմարդն (այսինքն՝ մարդը

---

1 Մատենադարան, ձեռ. № 2751, էջ 212բ (ընդգծումն իմն է — Գ. Գ.)։

2 Մատենադարան, ձեռ. № 2595, էջ 247ա։

3 Նույն տեղում, էջ 248բ։

հոգու և մարմնի միասնություն լինելով—Գ. Գ.), այս միթէ՞ արժան իցէ տրամաւել»[1]։ Մարմինը և հոգին, ըստ Իմաստասերի, ունեն տարբեր ֆունկցիաներ, «գործ մարմնոյ այն է, որ արիւն և շունչ գործէ ի կերակրոյն»[2], իսկ մարդու հոգու ֆունկցիան բանականությունն է։

Իմաստասերը գտնում է, որ կենդանիները բոլոր դեպքերում առաջնորդվում են սոսկ բնազդով։ Թեև կենդանիները ևս ունեն գործելու ունակություն, բայց և այնպես, ի տարբերություն մարդու, նրանք այդ կատարում են իրենց բնազդով։ «Մի՞թէ արուեստիւ և խորհրդով գործէ մեղուն և սարդն, որ ուսեալ է և կամ մարթէ առնել,— հարցնում է նա և պատասխանում,— ո՛չ, այլ ի բնութենէ, առանց խորհելոյ և արուեստի ուսանելոյ, զի հնարքն և արուեստքն բանականի է»[3]։ «Մեղուն և ծիծառն և այլքն,— գրում է նա մի այլ տեղ,—ոչ եթէ նախ իմացութեամբ առնեն, այլ ի բնութենէ ունին»[4]։ «Զգիտութիւնն և զիմաստքն,— կատեգորիկ կերպով պնդում է Իմաստասերը,— ի բանականէս է և ոչ ի շնչաւոր անասունքդ... ո՛չ յանասունքն. ո՛չ յանշունչքն խորհրդով և նախահոգութեամբ չէ, այլ առանց կամաց, բնութեամբ միայն»[5]։

Իմաստասերը գտնում է, որ մարդկանց և կենդանիների գործողություններն, նրանց գործունեությունը էապես տարբերվում են իրարից։ Մարդկանց գործունեությունը կանխամտածված է, գիտակցված, նախօրոք պլանավորված, մինչդեռ կենդանիների գործունեությունը հիմնված է բնազդի վրա։ Այս էական տարբերության պատճառով կենդանիների «ստեղծագործությունները» նման են իրար, չունեն իրենց անհատականությունը, մինչդեռ մարդկանց ստեղծագործության մեջ չկա այդ միօրինակությունը։ «Քանզի մարդիկ,— գրում է Իմաստասերը,— թէպ՛ատ տեսակաւ մի են և հաւասար, բայց զիտութեամբ և փարթամութեամբ անդոյզ են, որպէս է տեսանել ի տուն և ի քաղաք, որ շինեալ են և բնակին, իսկ մեղուն և մրջիւն միապէս գործեն և չկայ զանազանութիւն ինչ ի նոսա»[6]։

Ըստ Իմաստասերի, ինչպես մարդուն՝ բանական էակին, նույնպես և կենդանիներին բնությունից տրված է իրենց գոյությունը և սերունդը պահպանելու հատկությունը։ «Ոչ միայն բանականն, այլ ամենայն կենդանիք բնաւորեալ է պահել զինքն ի մահուանէ»[7],— գրում է նա։ Սակայն մի էական տարբերությամբ՝ կենդանիների մոտ այդ հատկությունը, ինչպես նրանց ամբողջ գործունեությունը, զուրկ է գիտակցական հիմքերից. նրանք այդ չեն անում կանխամտածված կերպով, և գոյության պահպանման համար նրանց կատարած գործողությունները սոսկ բնազդական մղում են։ «Մի՞թէ զիտութեամբ առնէ զայն ծիծառն, թէ այս ինձ օգուտ է և կամ թէ փոյթ առաքինութեան ունին կենդանիքդ և զայն, որ տեսէ և մնայ ազգն աճմամբ, կարծես թէ նախախնամութեամբ հոգան և ապայ գործեն»,— հարցնում է Իմաստասերը և պատասխանում. «ծանր և դժուարին է զայս կարծել, թէ նոքա խորագիտութիւն ունին և իմաստութեամբ վարին»[8]։

Իմաստասերը գտնում է, որ կենդանիների մոտ սերունդը պահպանելու ունակությունը ևս գիտակցված չէ։ Այս կապակցությամբ նա գրում է. «չէ թէ ուսեալ և զայն մուկն, որ յառաջ քան զայն, որ ծնանի և աճէ ի յորջն ցանկայ մտանել, բազում անդամ լինի, որ արտաքոյ որջոյն ձգէ զձագսն»[9]։ Առարկելով նրանց, ովքեր հակված են կենդանիների գործողությունները նրանց գիտակցությամբ բացատրել, Իմաստասերը, գրում է. «Ի բաց պետի տանել զցնորս մտադն այնոցիկ, որք կարծեցին, թէ շունն զայն, որ գնաց ու եկաւ յաչ և յահեակ... մտաց զօրութեամբ արար և կամ թէ այն, որ զխնկեմորթն ուտէ և կամ թէ այլ ինչ, որ զհետ այնոցիկ երկի՝ կարծիս տայ բանի մասին»[10]։ Կենդանիների մասին «չէ պատեհ ասել, թէ բնտրութեամբ և յառաջահոգութեամբ առնեն զգործն, այլ բնութիւնն բաշխեաց և նա զայն ընտանի և ի յոր իւրաքանչիւրոց»[11]։ Գիտակցականության առումով՝ կենդանիներին ոչ մի պարագայում չի կարելի

1 Մատենադարան, ձեռ. № 2751, էջ 198ա։
2 Մատենադարան. ձեռ. № 2595, էջ 249բ։
3 Նույն տեղում, էջ 250ա։
4 Նույն տեղում, էջ 243ա։
5 Նույն տեղում, էջ 250ա։
6 Նույն տեղում, էջ 251ա։
7 Նույն տեղում, էջ 248ա։
8 Նույն տեղում, էջ 250ա։
9 Նույն տեղում, էջ 250բ։
10 Նույն տեղում։
11 Նույն տեղում, էջ 251ա։

նմանեցնել մարդուն։ Նրանք մանուկներին էլ նման չեն, որովհետև բանականությունը մանուկների մոտ թեև չի երևում, բայց և այնպես գոյություն ունի որպես հնարավորություն «Եւ ոչ տղայ մանկանց չեն նման,— գրում է Իմաստասերը,— զի թէպէտ և չերևի ներգործութեամբ բանական, սակայն զօրութեամբ են»[1]։

Իմաստասերը կանգնած է այն տեսակետի վրա, թե ճանաչելու ունակությունը որպես հնարավորություն բնությունից տրված է բանականին, նրա հատկանիշն է։ Մարդու բանականությունը պոտենցիայում ունի արտաքին աշխարհը ճանաչելու կարողություն, որը դիտելիքների է վերածվում այն ժամանակ, երբ մարդն ուսումնասիրում է իրեն շրջապատող օբյեկտիվ աշխարհը։ Հենվելով Արիստոտելի վրա, Իմաստասերը գրում է. «Արիստոտէլէս երկուս ախորժէ անուանել զոր ի մեզ բանականն՝ ըստ զաւրութեան զոմն և զմիւսն՝ ըստ ներգործութեան։ Զզաւրութեամբ զմիտսն ամենեցուն ունել, իսկ ըստ ներգործութեան՝ կարի յոյժ սակաւուց, իմաստասիրաց միայն։ Եւ զզաւրութեամբն բնաւորական զոլ, իսկ զներգործութեամբն ի դրուստ մտեալ, որ է ուսմամբ և երկայնատրութեամբք առաքինայգործել և լինել կատարելայմիտ»[2]։

Մարդուց անկախ, օբյեկտիվորեն գոյություն ունեցող աշխարհը, նրա իրերն ու երևույթները, ըստ Իմաստասերի, մարդ ճանաչում է բանականությամբ՝ զգայարանների միջոցով։ «Զոյժարուն զգայութիւնքս յուղիղ և յառաքինի մտաց կարգաւորեալք և հարմարեալք, որպեսզի նորաւք և ինքն իմաստասիրեսցէ զբնութեան ամբողջ»[3],— գրում է նա։

Ուրեմն, աշխարհի առարկաների ու երևույթների մասին մեր առաջին տպավորությունները ստանում ենք զգայարանների միջոցով։ Խոսելով մարդու հինգ զգայարաններից շոշափելիքի մասին, Իմաստասերը գրում է. «Շոշափականն ոչ ձեռաց ելեալ, այլև բովանդակ իսկ է զգայարանաց և մարմնոյն ամենայնի, քանզի որ զգա ջերմութեան և ցրտոյ կամ խոնաւոյ և ցամաքութեան, զոզորկն և զխոշոր և զանգայտ և զխիստ՝ շուշափելիք են, զոր հաստատակ ամենայնն վիճակեցան ունել կենդանիք, թէպէտ և յոյժ ի նոցանէ ոչ զոմանս ի զգայարանաց չորից»[4]։ Ճանաչողության պրոցեսը, սակայն, գիտակցական գործունեության արդյունք է։ Զգայարաններն ինքնին, առանց գիտակցության միջամտության չեն կարող մեզ դիտելիքներ տալ աշխարհի իրերի ու երևույթների մասին։ Եթե հնարավոր լիներ միայն զգայարաններով, առանց գիտակցության ու բանականության ճանաչել աշխարհը, ապա ճանաչելու ունակությունը տրված կլիներ ոչ միայն մարդուն, այլև կենդանիներին, որովհետև նրանք ևս ունեն զգայարաններ։ Եթե կենդանիները, որոնք գործողություններ են կատարում, կարողանում են պահպանել իրենց գոյությունն ու սերունդը, ինչպես արդեն ցույց տվեցինք վերևում, զեկավարվում են ոչ թե գիտակցությամբ՝ ճանաչելով աշխարհի իրերն ու երևույթները, այլ լոկ բնազդով, որը նրանց տրված է բնությունից, ապա մարդը, ընդհակառակ, «լորժամ կամի գործել,— գրում է Իմաստասերը,— ոչ առանց խորհելոյ յառաջ և քննելոյ մխի ի գործ, այլ յառաջ հոգին ի խորհուրդն գործէ և ապա խորհուրդն ի զգայիսս»[5]։

Աշխարհի իրերը և երևույթները ճանաչելու համար նյութ տալիս են զգայարանները, «Խորան մեր՝ մարմինս, և գուռն՝ զգայութիւնս, և նստել՝ միտքն»[6]։ Տեսնելով, շոշափելով իրերը մարդը նրանցից ստանում է առաջին տպավորությունը, սակայն, ըստ Իմաստասերի, բանականությամբ է, որ նա կարողանում է ճանաչել աշխարհը։ Զնայած որ մենք զգայարաններով ենք կարողանում ստանալ առաջին պատկերացումը առարկաների, բնության երևույթների մասին, բայց սոսկ զգայությամբ հնարավոր չէ թափանցել նրանց էության մեջ, իմանալ նրանց բազմակողմանիորեն։ «Մտաց աչք յոլով տեսական զօրութիւն ունի»[7], քան ինքը աչքը, ասում է Իմաստասերը։ Բացի դրանից, բնության մեջ կան իրեր և երևույթներ, որ անմիջական զգայական ընկալման չեն ենթարկվում, այդպիսիք մենք իմանում ենք մտքի «հոգւոյ ակամբք», այսինքն՝ բանականության միջոցով. «անմարմինքն հոգւոյ ակամբք տեսանին և ոչ ձեռօք շոշափին»[8],— գրում է Իմաստասերը։

---

1 Մատենադարան, ձեռ. № 2595, էջ 250բ։

2 «Հովհաննես Իմաստասերի մատենագրությունը», էջ 307։

3 Մատենադարան, ձեռ. № 7, էջ 102բ։

4 Մատենադարան, ձեռ. № 5619, էջ 129բ։

5 Մատենադարան, ձեռ. № 2595, էջ 243ա։

6 Նույն տեղում, էջ 268բ։

7 Նույն տեղում, էջ 268ա։

8 Նույն տեղում, էջ 268բ։

Այսպիսով, ինչպես տեսնում ենք, Իմաստասերը մեծ տեղ է տալիս բանականությանը։ Նա գտնում է, որ առանց բանականության ակտիվ գործունեության զգայարանները պասսիվ են, նրանք իրենք արտաքին աշխարհից տպավորություններ են ստանում մտքի միջնորդությամբ միայն, իրենց «գուռը» բաց են անում արտաքին աշխարհի առաջ այն ժամանակ, երբ այդ անելու համար զգայարաններին թելադրում է միտքը։ «Միտքն որչափ յինքեան է և չէ ի զգալիսս զգայութիւնքն հնազանդին նմա»[1],— գրում է նա։ Այստեղ Իմաստասերը որոշակիորեն պաշտպանում է այն տեսակետը, թե միտքը զգայության նկատմամբ ակտիվ է, իսկ զգայությունը պասսիվ է, ուստի առանց մտքի գործունեության, սոսկ զգայարաններով աշխարհի մասին գիտելիքներ ունենալ չի կարելի։ Այս պատճառով՝ «զգայութիւնքն է կին խորհրդոյն, զի խորհուրդն, սերմանէ և զգայութիւնքն կրեն»[2]։ Սակայն, ինքը՝ միտքը ևս առանց զգայության տրամադրած տվյալների անզոր է. նա չի կարող «գործել», եթե զգայարանները նյութ չեն տալիս նրան։ «Զի միտքն,— գրում է Իմաստասերը,— զգալեօքն շարժի, վասն որոյ և չգործէ միտքն նախ քան զգալ»[3]։ Այսինքն՝ Իմաստասերը իմացության պրոցեսը գիտում է որպես բանականության և զգայարանների գործունեության արդյունք. նա պաշտպանում է զգայության և բանականության փոխադարձ պայմանավորվածության սկզբունքը՝ ակտիվ դերը տալով բանականությանը։

Մեծ տեղ հատկացնելով բանականությանը և միաժամանակ չթերագնահատելով զգայարանների դերը ճանաչողության մեջ, Իմաստասերը մերժում է մեր գիտելիքների բնածին լինելու տեսակետը։ Գիտելիքները մարդուն տրվում են «ուսման» և «աշխատութեան» միջոցով։ «Միայն բանականին է ունակական գիտութիւնն և արուեստ իմաստութեանն, զոր չուներ յառաջ և ուսմամբ եգիտ»[4],— գրում է նա։

Աշխարհի երևույթների և իրերի ճանաչողությունը մեկ անդամից չի տրվում, այն նվաճվում է աստիճանաբար և տևական ուսումնասիրության արդյունք է։ Այս պատճառով՝ գիտությունները, որոնց նպատակն է աշխարհի երևույթների ու առարկաների բացատրությունը տալ, աստիճանաբար են հասնում ճշմարտության բացահայտմանը։ Իմաստասերը գրում է. «Զի որպէս արուեստ բժշկութեան ոչ ի սկզբանցն ճշգիւ ամենայն գիտացեալ եղև, այլ առ սակաւ սակաւ, նոյնպէս և շրջաբերութիւն արեգական և լուսնի առ սակաւ սակաւ գիտացեալ եղև»[5]։

Ըստ էության գիտությունների զարգացումը երևույթների մասին մարդկանց թերի, ոչ լրիվ գիտելիքներից ու պատկերացումներից դեպի ավելի բարձր ու կատարյալ գիտելիքների և ըմբռնումների գնացող պրոցես է։ «Ըստ արուեստի և մակացութեան հնար է մերթ զնոյն ինքն ճշմարտութիւնն և մերթ՝ մերձ առ ճշմարտութիւնն, և զայսոսիկ դարձեալ երկակի՝ և կամ աւել և կամ սուղ դտանել»[6],— գրում է Իմաստասերը։ Սրանից հետևում է, որ գիտությունների զարգացումը միաժամանակ սխալ ըմբռնումների աստիճանական ուղղում է։

Իմաստասերը գրում է. «Քանզի աշխատութեան և տքնութեան պէտք են՝ առ ի գիտել զստուգութիւն բանից և իրաց, վասն զի ոչ բանն գիրս հաստատէ, այլ իրն՝ զբանն, որոյ սվար են խնդրել զճշմարտութիւն։ Ապա ոչ է պատշաճ հայել ի բանիցն շաղակրատանս, բէպէտ և հաւանական թուեսցի։ Քանզի բանն նշանակիչ իրին է՝ չէ իրաւացի հակառակ իրացն արտարերիլ, այլ միայն ճշմարտութեան հետեւել»[7]։ Այստեղից հետևում է, որ մարդ ճանաչում է սուբյեկտից անկախ գոյություն ունեցող աշխարհը, նրա առարկաները ու երևույթները։ Գիտելիքների նկատմամբ արտաքին աշխարհն առաջնային է, անկախ է և նյութ է տալիս մեր իմացությանը։ Հասկացությունները, մեր մտքերը առարկաների ու երևույթների մասին չեն կարող պայմանավորել նրանց գոյությունը, մինչդեռ, ընդհակառակը, իրերով ու երևույթներով են պայմանավորված մեր գիտելիքները, այսինքն՝ իրերն առաջնային են, իսկ մեր գիտելիքները երկրորդային։ Մարդը կարող է բազմաթիվ բառեր, մտքեր արտահայտել, ինչպես ասում է Իմաստասերը «շաղակրատել», սակայն կարող է պատահել, որ դրանք ճիշտ չարտացոլեն իրականությունը։ Ճշմարիտ են, ըստ Իմաստասերի, միայն այնպիսի մտքերը, որոնք համապատասխանում են իրականու-

---

[1] Մատենադարան, ձեռ. № 2595, էջ 259ա։
[2] Նույն տեղում, էջ 252ա։
[3] Նույն տեղում, էջ 260բ։
[4] Նույն տեղում, էջ 250բ (ընդգծումն իմն է—Գ. Գ.)։
[5] «Հովհաննես Իմաստասերի մատենագրությունը», էջ 224։
[6] Նույն տեղում, էջ 255։
[7] Նույն տեղում, էջ 238 (ընդգծումն իմն է—Գ. Գ.)։

թյանը, որոնց իսկությունը ստուգված է։ Մեր ըմբռնումները իրերի և երևույթների մասին կարող են փոխվել, սակայն դրանից իրերն ու երևույթները չեն փոխվում, որովհետև իրականությունն ինքն է մեզ մտքեր տալիս։ Մեր գիտելիքները, որոնք օբյեկտիվ աշխարհի արտացոլումն են, կարող են ճիշտ կամ սխալ, թերի կամ լրիվ լինել, մեր տրամաբանական կառուցումները աշխարհի մասին կարող են հավանական թվալ, բայց դրանից արտաքին աշխարհը համապատասխան փոփոխության չի ենթարկվում։ «Այլ զի՞նչ ասցուս բերէ բանիւն ոչ ասել իրն հաստատապէս կացեալոյ,— գրում է Իմաստասերը,— քանզի եթէ ասէ բան և եթէ ոչ, իրն անսխալ ունի զիւրութեանն իւրոյ յատկութիւն»[1]։ Ուստի, միայն օբյեկտիվ աշխարհն է, որ կարող է հավաստել մեր միտքը։ Եթե միտքը ճիշտ է արտահայտում իրերի էությունը, առարկաների փոխհարաբերությունը, ապա նա ճիշտ է, իսկ եթե ոչ սխալ է։ Այսպիսով, ըստ Իմաստասերի, ոչ թե մեր մտքերն են հաստատում ու բնորոշում իրականությունը, այլ օբյեկտիվ աշխարհն է հաստատում ու բնորոշում մեր մտքերը։ Մեր մտքերը ոչ այլ ինչ են, քան մարդուց անկախ, ռեալ գոյություն ունեցող աշխարհի արտացոլումը։ Իմացության բովանդակությունը օբյեկտիվ աշխարհն է։

Օբյեկտիվ իրականության մասին ձեռք բերած գիտելիքները մարդիկ իրար հաղորդում են բառերի ու խոսքի միջոցով՝ յուրաքանչյուր առարկայի և երևույթի տալով իր անունը։ Առարկան, նրա էությունն առաջնային է, իսկ նրա անունը, անվանումը երկրորդային։ Անունը կարող է ճիշտ ու ամբողջապես չարտահայտել առարկայի կամ երևույթի էությունը՝ «ոչ զանունն, սակայն. զկուրիւն ստուգապէս ցուցանէ, և քաջ է կուրիւն իսկական, քան զանունն պիտակ ոչ խոտելով ինչ զայն, որ է առաջին»[2],— գրում է Իմաստասերը։

Վերը բերված՝ իմացության, գիտելիքների նկատմամբ արտաքին աշխարհի առաջնության, անկախության մասին մտքերից հետևում է նաև, որ Իմաստասերը միջնադարում չափազանց վիճելի ու կարևոր հարցերից մեկը՝ ընդհանուրի և մասնավորի փոխհարաբերության հարցը՝ նրանց առաջնության տեսակետից, լուծում է հօգուտ մասնավորի և հանդես է գալիս նոմինալիզմի պաշտպանությամբ։ Եթե առաջնային են կոնկրետ իրերը, իսկ մեր գիտելիքները, մտքերը նրանց մասին ածանցվում են նրանցից, պայմանավորվում են այդ կոնկրետ իրերով, ապա, ուրեմն, ռեալ գոյություն ունեն և առաջնային են ոչ թե ընդհանուր հասկացությունները, այլ եզակին, մասնավորը, կոնկրետ զգայական իրերը։ Այս է հաստատում նաև Իմաստասերի հետևյալ միտքը՝ «առաջին և առաւել գոյացութիւնք ասին անհատքն»[3]։

«Բանը», դաղափարը, միտքը օբյեկտիվորեն գոյություն ունեցող առարկաների և իրերի մասին մեր պատկերացումների, ըմբռնումների արտահայտությունն են։ Այդ ըմբռնումների և պատկերացումների սխալ կամ ճիշտ լինելը, ըստ Իմաստասերի, պետք է հաստատվի և կարող է հաստատվել միայն փորձով։ Նա դեմ է նրանց, որոնք ճշմարտություններ ձգտում են հավաստել զուտ խոհականությամբ, առանց դիմելու փորձին, առանց գործով այն ապացուցելու։ «Պարտ է իմաստակացն զխոհականութիւնն գործովք տեսանել, առաւել քան բանիւ»[4],—գրում է Իմաստասերը։

Իմաստասերը ճանաչողության պրոցեսում մեծ տեղ է տալիս փորձին։ Ալիշանը, հենվելով Իմաստասերի իրեն հայտնի աշխատությունների մտքերի վրա, գրում է. «Ինքն (Իմաստասերը— Գ. Գ.) ուսումնական բաներ սովրիլ և գրելու համար յայտնապէս կու պահանջէ, թէ «ամենեին բազմահմուտ պարտ է գոլ ձեռնարկողին այսմ, ոչ միայն սրբոց և աստուածաշունչ գրոց, այլև արտաքնոց»։ Ասկէ այլ գեղեցիկ և հաստատուն փիլիսոփայութեամբ կու պահանջէ, որ ուսումն կամ գիտութիւնն փորձով ալ ստուգուի։ «Դարձեալ թէ և սրբոյ կիրթ ի վարժ. առանց փորձի՝ կարծիքն ճաւատարմանալ ոչ կարուցէ. և փորձն՝ հաստատուն և անեղկրայ... վասն զի ոչ է պարտ միայն ճնազիտակ լինել այլ և ինքնարար»[5]։ Իմաստասերը գիտական ճշմարտություններ սահմանելու հարցում դեմ է եղել հեղինակությունների ճանաչմանը։ Քանի որ, տրամաբանում է նա, բնության իրերի ու երևույթների մասին մեր գիտելիքները ասիճանաբար են ձեռք բերվում՝ ավելի թերի ըմբռնումներից գնում են դեպի ավելի ամբողջական, բազմակողմանի ու կատարյալ ըմբռնումները, ապա չի կարելի, հենվելով հեղինակությունների վրա, պնդել մի որևէ երևույթի մասին մեր գիտելիքների բացարձակ համաստիությունը։ Գիտա-

[1] «Հոլհան է։ Իմաստասերի մատենագրությունը», էջ 253 (ընդգծումն իմն է — Գ. Գ.)։

[2] Նույն տեղում, էջ 278 (ընդգծումն իմն է — Գ. Գ.)։

[3] Մատենադարան, ձեռ. № 2751, էջ 218ա։

[4] Մատե ադա ան, ձեռ. № 2593, էջ 275ա։

[5] Ղ. Ալիշան, Յուշիկք հայրենեաց հայոց, Վենետիկ, 1921, հատ. Բ, էջ 262 (ընդգծումն իմն է — Գ. Գ.)։

կան ճշմարտությունների հասնելու խնդրում մեծ դեր է խաղում կասկածը, որի դեպքում պետք է դիմել փորձին և քննությանը՝ որպես մեր գիտելիքները ստուգելու հավաստի միջոցների։ «Զեմ հայնց դիւրահաւան,— գրում է Իմաստասերը,— որ առանց քննութեան հաւատամ ամենայն բանից և պատրիմ, զի առանց քննելոյ և փորձելոյ չէ պատեհ հաւանել ամենայն բանից»[1]։

Սակայն փորձի ու քննության դերը, ըստ Իմաստասերի, դրանով չի սահմանափակվում, փորձի նպատակն ու նշանակությունը միայն այն չէ, որպեսզի ստուգենք մեր գիտելիքների ճշմարտացիության աստիճանը։ Փորձը և քննությունը միաժամանակ հիմք են հանդիսանում բնության նոր երևույթների ու իրերի բովանդակության բացահայտման համար, նոր օրինաչափությունների ճանաչման համար։ Քանի որ բնության մեջ երևույթներն ու իրերը փոխադարձորեն կապված են, պայմանավորում ու հաջորդում են իրար, մեկը առաջացնում է մյուսը՝ «առանց պատճառի չկայ իրք»[2], ուստի մի երևույթի, իրի ուսումնասիրություն և ճանաչումը հիմք է հանդիսանում այդ երևույթից կամ իրից բխող հետևանքի ուսումնասիրության և ճանաչման համար։ «Տեսանելի օրինակաւս,— գրում է Իմաստասերը,— իմանամք և քննեմք զառաջիկայն, որ լինելոց է, զի ապականին և նոքա, որպէս զայն, որ տեսանեմք»[3]։

Իմացությունը, աշխարհի երևույթների և իրերի ճանաչումը, ըստ Իմաստասերի, ինքնաբավ պրոցես չէ, այն հետապնդում է պրակտիկ նպատակներ։ Նրա գլխավոր խնդիրն է մարդկանց գոյավիճակի բարելավումը։ Այս պատճառով՝ աշխարհի երևույթների ըմբռնումը ոչ միայն տեսական նշանակություն ունի, այլև՝ գործնական։ Այսպես՝ սխալ ըմբռնումը վնասում է ոչ միայն հայեցողական ճշմարտությանը, այլև անձին, մարդուն։ «Ստութիւն ոչ միայն ճշմարտութեան, այլև անձին ոսոխ է»[4],— գրում է Իմաստասերը։

Այսպիսով, ինչպես տեսնում ենք, Իմաստասերի աշխարհայացքը, որը դեռևս պարուրված է միջնադարյան կրոնական ըմբռնումների մշուշով, ունի լուսավոր շատ տարրեր։ Հանդես գալով կրոնի անունից, նա, միաժամանակ, աշխատում է կրոնից անկախ մտածել, շատ հարցերում դուրս գալով եկեղեցական դոգմաների սիստեմից։ Իմաստասերի բնագիտական, իմացաբանական հայացքները, նրա նոմինալիզմը, փորձի, գիտությունների զարգացման, օբյեկտիվ աշխարհի ճանաչողության և այլ հարցերի մասին նրա մտքերը միջնադարի պայմաններում առաջադեմ էին և արժանի բարձր գնահատականի։

Հանձին Իմաստասերի հայ միջնադարը, XI—XII դարերը, հրապարակ են հանել մի այնպիսի մտածողի, որը չափազանց որոշակիորեն առաջադրում է մի շարք հարցեր, որոնք բարձրացվում են միայն հետագա դարերում՝ բրիստոնեական-կրոնական դոգմատիկ ու սխոլաստիկ մտայնության դեմ ըմբոստացող, բնական գիտությունների զարգացման համար մաքառող առաջավոր մտածողների կողմից։

Հովհաննես Իմաստասերի փիլիսոփայական, բնագիտական առաջավոր հայացքները օբյեկտիվորեն ճանապարհ էին հարթում աստվածաբանական, կրոնական միստիկայից անկախ հայ մտքի հետագա զարգացման համար, նպաստում էին այնպիսի առաջավոր մտածողների ասպարեզ գալուն, ինչպիսիք են Հովհաննես Երզնկացին, Վահրամ Ռաբունին, Հովհան Որոտնեցին, Գրիգոր Տաթևացին և ուրիշներ։

ФИЛОСОФСКИЕ ВЗГЛЯДЫ ИОАННА ИМАСТАСЕРА

Г. О. ГРИГОРЯН

(Резюме)

Иоанн Имастасер (род. ок. 1045—1055 гг., ум. в 1129 г.) является одним из выдающихся мыслителей средневековой Армении. Однако до настоящего времени нет более или менее цельного исследования о его мировоззрении. В данной статье делается первая попытка осветить философские воззрения Имастасера.

[1] Մատենադարան, ձեռ. № 2595, էջ 250ա (ընդգծումն իմն է—Գ. Գ.)։
[2] Նույն տեղում, էջ 247ա։
[3] Նույն տեղում, էջ 242բ։
[4] Մատենադարան, ձեռ. № 2751, էջ 193ա։

Иоанн Имастасер, как и подавляющее большинство мыслителей-философов средневековой Армении, основной вопрос философии решал идеалистически, в пользу первичности бога и вторичности природы. Однако он не повторял церковное понимание вопроса догматически, а, используя аристотелевскую категорию возможности и действительности, стремился философски и логически обосновать его и таким образом сделать вопрос приемлемым для разума.

Все предметы, вещи природы, растительный и животный мир, согласно Имастасеру, имеют свою качественную определенность и состоят из четырех элементов: воздуха, земли, воды, огня.

У Имастасера имеются попытки диалектического осмысления природы. Природу он воспринимает как единство противоречий. Противоречие является следствием соединения в предметах противоположных элементов и присуще как неодушевленному, так и одушевленному миру.

Имастасер выступал против мистификации явлений природы и критиковал суеверие. Явления природы он старался объяснить (в рамках достижений науки своей эпохи) не сверхъестественными силами, а силами самой природы и боролся за развитие научных знаний о природе.

Предметы и явления мира, согласно Имастасеру, познаваемы. Познание, как возможность, является свойством разума, которым наделен только человек. Процесс познания начинается с ощущений. Без данных органов чувств познание невозможно. В познании Имастасер большое значение придает разуму. Только разумом, говорит он, можно вникуть в сущность явлений и предметов.

Человек познает существующий независимо от него объективный мир. Познание природы — это постепенный процесс, поднимающийся от низших, несовершенных значий к высшим, более совершенным, притом этот процесс восхождения совершается путем наблюдений и изучения природы. Имастасер отвергал авторитет в установлении научных истин. В процессе познания он большое место уделял опыту и требовал проверки знания опытом. «Без опыта мнение не может быть достоверным; опыт прочен и несомненен»,— пишет он.

Имастасер стоит на позициях номинализма. Он утверждает, что реально существуют и первичны конкретно-конечные вещи а не общие понятия. «Первичной и преимущественной сущностью являются индивиды»,— пишет он.

Философские и естественно-научные взгляды Иоанна Имастасера в условиях средневековой действительности были весьма прогрессивными. Объективно они расчищали дорогу для дальнейшего развития идей, свободных от религиозной мистики и догматики, и способствовали появлению таких прогрессивных для своего времени мыслителей, как Иоанн Ерзынкаци, Ваграм Рабуни, Иоанн Воротнеци, Григор Татеваци и др.